Health Homes (Առողջապահության Տներ) Ծրագիր

Առողջապահության Տներ Ծրագրի Ակնարկ

Առողջապահության Տուն Ծրագիրը (HHP) լրացուցիչ անվճար ծառայություններ է առաջարկում Medi-Cal-ի անդամներին, որոնք ունեն որոշակի քրոնիկ առողջական և (կամ) հոգեկան առողջության խնդիրներ և որոնք ունեն առողջապահական խնամքի մեծ կարիք կամ չունեն ապրելու տեղ:

Ինչպե՞ս HHP-ն կարող է Ձեզ օգնել:

Եթե պայմանունակ լինեք, HHP-ն ձեզ առողջապահական ծառայություններ և այլ օգնություն կտրամադրի ձեր կարիքները բավարարելու համար: Դուք կունենաք թիմ, որը կոգնի հետևյալ հարցերում՝ Դուք կունենաք թիմ, որը կօգնի հետևյալ հարցերում՝

- Ձեզ անհրաժեշտ խնամքի ծրագիր կազմելը
- Բժիշկներին գտնելը և հանդիպումների մասին պայմանավորվելը
- Բոլոր բժիշկներին ձեր առողջապահական կարիքների և ցանկությունների մասին տեղյակ պահելը
- Ձեզ համայնքին և ձեզ անհրաժեշտ սոցիալական ծառայությունների (ինչպիսիք են սնունդը և բնակարանը) հետ կապելը

Այս լրացուցիչ ծառայություններն առաջարկվում են որպես Ձեր ներկա Medi-Cal ծրագրի մի մաս:

Medi-Cal ծառայությունները, որոնք հիմա ստանում եք, չեն **փոփոխվի կամ** հետ վերցվի: Դուք նույն կերպ կարող եք այցելել ձեր նույն բժիշկներին, սակայն հիմա **դուք կարող** եք լրացուցիչ **օգնություն ստանալ:**

Ո՞վ կարող է ստանալ HHP ծառայությունները:

HHP ծառայությունները ստանալու համար դուք պետք է բավարարեք այս բոլոր 3 պահանջները՝

1. Ընդգրկված լինեք Medi-Cal-ի կառավարվող խնամքի առողջապահական ծրագրում
2. Ունենաք որոշակի քրոնիկ առողջական և (կամ) հոգեկան առողջության խնդիրներ
3. Պառկած լինեք հիվանդանոցում, ունեցած լինեք այցեր արտակարգ օգնության բաժանմունք կամ ապրելու տեղ չունենաք

Եթե պայմանունակ եք, ապա HHP ծառայությունները ստանալը Ձեր ընտրության հարցն է:

HHP-ն Medi-Cal-ի Առողջապահական Ծրագրի Անդամների համար

Դուք պետք է ներգրավված լինեք Medi-Cal-ի առողջապահական ծրագրում, որպեսզի HHP ծառայությունները Ձեզ հասանելի լինեն: Եթե կարիք ունեք ընդգրկվելու Medi-Cal ծրագրում, ապա կարող եք զանգահարել Առողջապահական Խնամքի Տարբերակներ 1-800-430-4263 հեռախոսահամարով:

Ո՞վ է տրամադրում HHP ծառայությունները

Ձեզ տրամադրում են Ձեր սեփական խնամող թիմը, որն աշխատում է ձեզ հետ միասին՝ ձեզ անհրաժեշտ ծառայություններնը ստանալու համար: Ձեր խնամքի թիմը կղեկավարի խնամքի հարցերով համակարգողը, որը ձեր հիմնական կոնտակտային անձն է:

Ձեր խնամքի թիմի մեջ ներառված են ձեր կողմից ընտրվող անձինք, ինչպես օրինակ ձեր

- Բժիշկներ, մասնագետներ և բուժքույրեր
- Դեղագործներ և սննդաբաններ
- Սոցիալական ծառայության գործի կառավարիչներ
- Խնամք տրամադրողներ և անձնական աջակցության համակարգը

Ինչպե՞ս են պայմանունակ Medi-Cal աննդամները օգտվում HHP-ի ծառայություններից:

Գոյություն ունի HHP ծառայություններից օգտվելու 3 եղանակ՝

1. Ձեր բժիշկը, ձեր Medi-Cal ծրագիրը կամ առաղջապահական ծառայությունների այլ մատակարարը կարող է կապվել ձեզ հետ
2. Ձեր բժիշկն ասում է ձեզ, թե Medi-Cal առողջապահական որ ծրագրին կարող եք պայմանունակ լինել
3. Դուք կարող եք զանգահարել ձեր Medi-Cal առողջապահական ծրագիր՝ տեղեկություն ների համար և տեսնելու համար, թե արդյոք դուք պայմանունակ եք

HHP-ի մասին ավելին իմանալու համար՝

1. Զանգահարեք ձեր Medi-Cal առողջապահական ծրագիր: Հեռախոսահամարը գտնելու համար ստուգեք Ձեր Medi-Cal ID քարտը կամ գնացեք bit.ly/plandirectory և սեղմեք ձեր վարչաշրջանի վրա:
2. Զանգահարեք Առողջապահական Խնամքի Տարբերակներ 1-800-430-4263 (TTY 1-800-430-7077) հեռախոսահամարով:
3. Հարցրեք ձեր բժշկին կամ կլինիկային ծրագրի մասին:

The Health Homes Program
bit.ly/HHPInformation